ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի և Մարտուն Փանոսյանի,

քննության առնելով դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակի՝ Պալատի նախագահի ներկայացրած նախագիծը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- *Հաստատել դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը՝ համաձայն հավելվածի:*
- *Սույն որոշմամբ հաստատված գնացուցակն ուղարկել դատարաններին:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

26 դեկտեմբեր 2013թ.
թիվ 33/3-Լ
ք. Երևան